

ԿԱՆՈՆՆԵՐ

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ
ԿՈՒԼԵԿՏԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

Հրատարակող թիւը Պետապի Հայկական Վարչութիւն. 1938

368

Խ-11

368
12-11

uf

1 MAR 2010

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

ԸՆԿ. Վ. ՅԱ. ԶՈՒԲԱՐԻ ԿՈՂՄԻՑ

30 դեկտեմբերի 1937 թ.

ՊԵՏԱԳԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Մոսկվա, Կոլյբեցկի փող. № 9.

ԽՍՀՄ-Ի
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻ ԱՏ

368
Խ-11

ս

1 MAR 2010

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

ԸՆԿ. Վ. ՅԱ. Զ Ո Ւ Բ Ա Ր Ի ԿՈՂՄԻՑ
30 դեկտեմբերի 1937 թ.

ՊԵՏԱՊԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Մոսկվա, Կոլյբեկովի փող. № 9.

ԽՍՀՄ-Ի
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻ Ա Տ

1.1 SEP 2013

93.775



«Խ. Հայաստան» ի հրատ. տպարան,
Ֆերեան, Գլավիտ № 6556, պատվ. № 163
տիրաժ 5600.

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒԼԵԿՏԻՎ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

1938 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 4-ԻՆ № 6

Մեր մեծ հայրենիքի աշխատավորության խո-
շորագույն հաղթանակներից մեկը հանդիսանում
աշխատավորների և նրանց ընտանիքների նյութական
ապահովության աճը: Այդ հաղթանակը դրված և Ստա-
լինյան Սահմանադրության մեջ:

«ԽՍՀՄ-ի քաղաքացիները նյութական ապահո-
վության իրավունք ունեն ծերության, ինչպես նաև
հիվանդության և աշխատունակությունը կորցնելու
դեպքում: Այդ իրավունքն ապահովվում է բանվորների
ու ծառայողների համար պետության հաշվին կատար-
վող սոցիալական ապահովագրության լայն ծավալ-
մամբ, աշխատավորներին ձրի բժշկական ոգնություն
ցույց տալով աշխատավորներին ոգտադործման համար
կուրսերների լայն ցանց տրամադրելով»:

ԽՍՀՄ-ի Սահմանադրության 120-րդ հոդ.

Գուտակցության և կառավարության կողմից
կիրառվող այն ձեռնարկումների շարքում, վերոն-
շախատակ ունեն ԽՍՀՄ աշխատավորության նյութա-
կան-կենցաղային բարեկեցության հետագա բարե-

լավումը, խոշոր նշանակություն ունի կյանքի կամավոր կողմնակալ ապահովագրությունը:

Կյանքի կողմնակալ ապահովագրությունը, վորն անց է կացվում այս կանոնների հիման վրա, լրացնում է աշխատավորներին և նրանց ընտանիքներին մահացության կամ աշխատունակությունը կորցնելու դեպքում միանվագ նյութական օգնություն ցույց տալու վերաբերյալ սոցիալական ապահովագրությունը:

ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

§ 1. Կյանքի կամավոր կողմնակալ ապահովագրությամբ կարող են ապահովագրվել՝ առանց բժշկական զննության յեկ անկախ հասակից՝ բանվորները, ծառայողները, կոլտնտեսականները, կոոպերացված անայնագործները, բանֆակներ, ֆարգործուհիների գաղթիցներ, տեխնիկումների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, միջին, բարձր և բարձրագույն կադմին պատկանող ղինվորականները, ինչպես նաև Բ.Գ.Բ., Կարմիր Նավատորմի և Ներգործող կամատի մասերի և հիմնարկների գերֆամիկետային ծառայության կրտսեր հրամկազմը և ազատավարձու կազմը:

§ 2. Յուրաքանչյուր աշխատավոր կարող է ապահովագրել միմիայն իրեն, իր աշխատավայրում:

§ 3. Կյանքի կողմնակալ ապահովագրություն ընդունվում են ֆարրիկներում, գործարարներում, խորհրդակցություններում, հիմնարկներում, ՄՏԿ-ում, արտիկներում և այլ կազմակերպություններում աշ-

խատող բոլոր անձինք, յեթե նրանք ապահովագրության առաջին ավանսային մուծանքը վճարելու որը հիվանդության պատճառով արձակուրդում չեն գրանվում:

Կոլտնտեսություններում ապահովագրություն ընդունվում են կոլտնտեսության այն բոլոր աշխատունակ անդամները, վորնք ապահովագրության նախորդող տարում իրենց անձնական աշխատանքով ձեռք են բերել վոչ պակաս քան 20%-ն այն աշխուրի միջին քանակի, վոր տվյալ կոլտնտեսության մեջ ընկնում են մեկ կոլտնտեսականին և իրենց առաջին մուծանքը (ավանս) վճարելու որը հիվանդ չեն կամ չեն ազատված աշխատանքից կոլտնտեսության մեջ հաշմանդամության պատճառով:

§ 4. Ապահովագրությունը ձեակերպվում է կամ ըստ ամբողջ ձեռնարկության, հիմնարկի, խորհրդակցության, ՄՏԿ-ի, արտիկի, կոլտնտեսության կամ ըստ յեթերի, հերթափոխությունների, վարչությունների, բաժինների, կոլտնտեսային կամ արտադրական բրիգադների և արտադրական այլ ողակների: Նույն կողմնակալում կարելի յե կազմակերպել մի քանի ապահովագրական կոլեկտիվներ նաև ըստ աշխատող անձանց օրհեստների, օրինակ՝ հիվանդանոցներում՝ բժիշկների, բուժ. քույրերի, հիվանդապահների կողմնակալներ, գաղթիցներում՝ ուսուցիչների, ուսանողների կողմնակալներ և այլն:

§ 5. Կողմնակալ ապահովագրություն ընդունվում է 500, 1000, 2000, 3000, 4000 և 5000 ուրլի գումարով յուրաքանչյուր անձին:

Ապահովագրություն կնքվում է այն դեպքում,

յեթե կոլեկտիվում դրավոր ցանկութուն են հայտնում ապահովագրելու նույնամանա ապահովագրական գումարով և վճարում են իրենց առաջին ավանսային մուծանքը վոյ պակաս քան աշխատողների առկա կազմի 40%-ը: Այդ կոլեկտիվի մնացած բոլոր աշխատողները, անկախ դրանց բվից, վորոնք չեն կամեցել ապահովագրվել կոլեկտիվի ընդունած ապահովագրական գումարով, կարող են նույն կոլեկտիվում իրենց կյանքն ապահովագրել ավելի փոքր գումարով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն կոլեկտիվներում, վորտեղ աշխատում են 6-ից ավելի քիչ հոգի, պահանջվում է, վոր կոլեկտիվի բոլոր աշխատողները մասնակցեն ապահովագրությանը և ապահովագրվեն բոլոր աշխատողների համար ընդունված նույնամանա ապահովագրական գումարով: Այն կոլեկտիվներում վորտեղ աշխատում են 6-ից մինչև 12 հոգի ապահովագրություն կազմակերպելու համար պահանջվում է, վորպեսզի նույնանման գումարով ապահովի 5 հոգուց վոչ պակաս:

§ 6. Պետապը կոլեկտիվ ապահովագրությունն ընդունում է մեկ տարով:

Ապահովագրական տարվա ընթացքում ապահովագրվածների թվի պակասելը չի խախտում ապահովագրության պայմանագիրը:

Տարին լրանալուց հետո ապահովագրվածները կարող են նորից կնքել իրենց ապահովագրությունը հաջորդ տարվա համար, յեթե նորոգվող պայմանագրով վճարեն առաջին մուծանքը վոչ պակաս քան

այնքան հոգի, վորքան պահանջվում է ապահովագրություն կնքելու համար:

§ 7. Ապահովագրվածների կոլեկտիվը իրավունք ունի փոփոխելու մինչ այդ իր ընդունած ապահովագրական գումարը: Կոլեկտիվի անցումն ավելի բարձր ապահովագրական գումարի ձևակերպվում է, պահպանելով այն բոլոր պայմանները, վորոնք սահմանված են նոր ապահովագրություն կնքելու համար:

Յեթե աշխատավորն իր կյանքն ապահովագրում է կոլեկտիվի հետ նույնամանա գումարով և կոլեկտիվը ապահովագրական ավելի բարձր գումարի անցնելու ժամանակ, հիվանդության պատճառով արձակուրդում է դնվում, ապա նա իրավունք ունի հիվանդ վիճակում, անցնելու կոլեկտիվի կողմից ընդունված ապահովագրական ավելի բարձր գումարի:

Առանձին անձինք, վորոնք ապահովագրվել են ավելի փոքր ապահովագրական գումարով, կարող են բարձրացնել իրենց ապահովագրական գումարը մինչև կոլեկտիվի կողմից ընդունված ապահովագրական գումարի չափն այն դեպքում, յեթե իրենց առաջին (ավանսային) մուծանքի որը՝ բարձրացրած ապահովագրական գումարի հաշվով՝ նրանք աշխատում են ապահովագրված կոլեկտիվում և արձակուրդում չեն գլուխ դնում հիվանդության պատճառով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԶԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՄՈՒԾԱՆՔՆԵՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 8. Յուրաքանչյուր ապահովագրվել ցանցկացողը պետք է գրավոր ցույց տա, թե ինչ գումարով

և նա կամենում իր կյանքն ապահովագրել և ում և նա նշանակում ապահովագրական գումարն ստանալու համար, իր մահանալու դեպքում:

Ապահովագրական գումար ստանալու համար ապահովագրվածը կարող է նշանակել իր ուղած անձին կամ մի քանի անձանց: Ապահովագրվածն իրավունք ունի ապահովագրական գումար ստանալու համար իր նշանակած անձին փոխարինել մի այլ անձով, վորի համար պետք է գրավոր դիմում տա պետվարկին և խնայգործին ոժանդակող հանձնաժողովին (Ոժկոմ):

§ 9. Յուրաքանչյուր ապահովագրվել ցանկացողը վճարում է ոժկոմի հավաքարարին ավանս վոչ պակաս քան յեռամսյակային ապահովագրական մուծանքը և ստորագրում ցուցակի մեջ, ցույց տալով վճարման թվականները:

§ 10. Ապահովագրական մուծանքը յուրաքանչյուր ապահովագրվող վճարում է մեկ տարվա, կիսամյակի կամ յեռամսյակի համար սկզբում, տարեկան 12 ուրբլի ապահովագրական գումարի յուրաքանչյուր հազար ուրբլուց: Մուծանքները Պետապի ընդունում է վոչ ուշ քան այն ժամկետը, վորով կոլլեկտիվին ապահովագրական վկայական է տրված:

§ 11. Այն աշխատավորները, վորոնք ապահովագրության կնքելու պահին դուրս են մնացել, կարող են գրավոր դիմում տալ և լրացուցիչ կերպով մտնել ապահովագրվածների շարքերը, պահպանելով ապահովագրության վերոհիշյալ պայմանները:

Այդ անձինք ապահովագրության ընդունվում

են մինչև վողջ կոլլեկտիվի տարեկան ապահովագրության ժամկետի վերջը:

Լրացուցիչ կերպով ապահովագրվողներն ավանսային մուծանք վճարում են այն ժամանակաշրջանի համար, յորը նրանք ապահովագրության մեջ են մտել և մինչև այն ժամկետի վերջը, վորի համար վճարված է վողջ կոլլեկտիվի ապահովագրության համար: Վոչ լրիվ ամսվա համար մուծանք ընդունվում է տարեկան մուծանքի 1/12 չափով՝ ինչպես լրիվ ամսվա համար:

§ 12. Ավանսային մուծանքներ հավաքելուց յերկու օրվա ընթացքում ոժկոմը պարտավոր է իր հավաքած գումարը մուծել պետքանկ, խնայգրամարկղը կամ շրֆինբանի գրամարկղը Պետապի հաշվին հիստանցելու համար և հանձնելու Պետապի տեսչին ավանսային մուծանքներ կատարած անձանց ցուցակը:

§ 13. Պետապի տեսուչը վոչ ուշ քան ցուցակներ ստանալուց 15 օրվա ընթացքում պարտավոր է ստուգել, թե արդյոք ճիշտ են ապահովագրված առանձին անձինք և ձևակերպել կոլլեկտիվի ապահովագրությանը կամ մերժել, յեթե թույլ են տրված այս կանոնների խախտումներ:

Յեթե կոլլեկտիվի կամ առանձին անձանց ապահովագրությանը սխալ է ձևակերպված, ապա Պետապի տեսուչն անմիջապես կազմակերպում է, ոժկոմի միջոցով, սխալ ստացված գումարների վերադարձն առանձին անձանց կամ կոլլեկտիվին, յեթե նրա ապահովագրությանը մերժված է:

§ 14. Պետապի տեսուչը ձևակերպում է ապահովագրությանը, տալով ոժկոմի, կոլտնտեսության

վարչութիւն, Ֆարգործտեղկումի կամ այլ հասարակական կազմակերպութիւն անվամբ ընդհանուր ապահովագրական վկայական կոլլեկտիվի համար և դուրս և գրում յուրաքանչյուր ապահովագրվածի համար կյանքի կոլլեկտիվ ապահովագրութիւն վկայական (միասնական ձևի)։

Պետապի տեսուչը յուրաքանչյուր վկայականի մէջ փակցնում և ապահովագրական վճարման գրոշմանիշ ապահովագրվածի կողմից վճարված ավանսային մուծանքի գումարով, ստորագրում և այդ վկայականները, կնքում և և ստորագրութիւն տալիս ոժկումին, յուրաքանչյուր ապահովագրվածին հանձնեալ համար։

§ 15. Հերթական ապահովագրական մուծանքներ ստանալիս ոժկումի հավաքարարը փակցնում և ապահովագրվածի վկայականում համապատասխան արժողութիւնը գրոշմանիշ։ Միաժամանակ, հավաքարարը փակցնում և վճարման ցուցակում գրոշմանիշի կոնտրոլ տալոն և անպայման տալիս և վճարողին ստո ագրելու ցուցակում գրոշմանիշի կոնտրոլ տալոնի վրայով։

Առանձին խոշոր կոլլեկտիվներում, վորտեղ կա Պետապի աշխատող, ապահովագրվածների հաշվառումը և հերթական ապահովագրական մուծումը քանիքի դանձումը կատարվում և կոնտրոլ քարտերով։ Այդ կոլլեկտիվներում գրոշմանիշերի կոնտրոլ տալոնները փակցվում են կոնտրոլ քարտերի մէջ։

§ 16. Ապահովագրական մուծանքներ դանձնուց հետո ոժկումը հաշիվ և տալիս այդ գումարների առթիվ Պետապի տեսչութիւնը և հանձնում և վճարման ցու-

ցակները տեսչութիւնը, վորտեղ նրանք պահվում են հատուկ գործում։

ՊԵՏԱՊԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒՅՈՒՆԸ

§ 17. Կյանքի կոլլեկտիվ ապահովագրութիւն գծով Պետապը լրիվ ապահովագրական գումար վճարում և.

ա) ապահովագրվածի մահանալու դեպքում, անկախ պատճառներից.

բ) յեթե ապահովագրվածը միայն դժբախտ դեպքի պատճառով մշտապես, լրիվ (100 % ու) կորցնում և իր աշխատունակութիւնը։

Աշխատունակութիւնը դժբախտ պատահարից մշտապես մասնակի կերպով կորցնելու դեպքում Պետապը վճարում և ապահովագրական գումարի այն տոկոսը, վորով ապահովագրվածը կորցրել և իր աշխատունակութիւնը։

§ 18. Թե արդյոք ապահովագրվածը դժբախտ դեպքի հետեանքով մշտապես քանի տոկոսով և կորցրել իր աշխատունակութիւնը, այդ վորոշում և եքրսպերտ-ըմիշկը կամ բժշկական եքսպերտիզայի բնութոն, Պետապի հրահանգի հիման վրա, բուժումն ավարտելուց հետո։

§ 19. Պետապը պատասխանատվութիւն կրում և այն դեպքում, յերբ ապահովագրվածը մշտապես կորցնում և իր աշխատունակութիւնն ապահովագրութիւնը (դժբախտ դեպքերից) ուժի մէջ յեղած ժամանակաշրջանում։ Պրոֆեսիոնալ աշխատունակութիւնը կորցնելու համար Պետապը պատասխանատու չէ։

§ 20. «Դժբախտ դեպք համարվում և յուրաքանչյուր անակնակալ դեպք, վորը մշտապես զրկել և ապահովագրվածին աշխատունակությունից (հաշմանդամության), ինչպես որինակ, այրվածքը, ցրտահարումը, հաշմանդամությունը վորևե տուրկայի կամ ապահովագրվածի իր քնկնելուց, չարազարծների կամ անասունների հարձակումից, շանթահարումից կամ ելեկտրական տոկից, մեքենաների և մեխանիզմների գործողությունից կամ ամեն տեսակի գործիքներ ոգտագործելուց, տրամվայի ավտոմեքենայի, գնացքի հարվածից և այլն, կամ արեվահարությունից, հանկարծակի թունազորում, ֆլասակար մթերքներից և նյութերից ու հանկարծակի հեղձանքը ֆլասակար գազերից և այլն:

Դժբախտ դեպքեր են նաև ներվային և հոգեկան հիվանդությունները, վորոնք առաջ են գտլիս վախից կամ այլ անակնակալ գործողությունից:

Յեթև ապահովագրվողը կորցնում և իր աշխատունակությունն ամեն տեսակի այլ հիվանդություններից թեկուզ և իր պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ, ապա ապահովագրական գումար չի վճարվում: Ապահովագրական գումար չի վճարվում նաև այն դեպքում, յերբ ապահովագրվածը կորցնում և աշխատունակությունը իր կողմից հանցագործություն կատարելու ժամանակ:

§ 21. Պետապը չի վճարում ապահովագրական գումար, յեթև ապահովագրվածը մահանում և այն անձի դիտավորությամբ, վորը նշանակված և ապահովագրական գումար ստանալու համար, ինչպես նաև յեթև ապահովագրվածի գույքը կամ նրա մահից հետո

այն անձի գույքը, վորը նշանակված և ապահովագրական գումարը ստանալու համար, բռնագրավում և դատարանի վճռի համաձայն:

§ 22. Պետապի պատասխանատվությունն աշխատավորների կողլեկտիվ ապահովագրության դժով սկսվում և այն որվա ժամի 24-ից, յերբ Պետապի հաշվին հանձնվել են ավանսային մուծանքները վոչ պակաս քան նույնանման ապահովագրական գումարով ապահովագրվելու ցանկություն հայտնողների առկա կազմի 40 %-ի համար:

Պետապի պատասխանատվությունը կյանքի կոլլեկտիվ ապահովագրության մեջ լրացուցիչ կերպով մտնողների համար սկսվում և այն որվա 24 ժամից, յերբ վճարվել և ոժկոմի հավաքարարին ավանսային մուծանքը, յեթև այդ անձինք մուծանքը վճարելու պահին հիվանդության պատճառով արձակուրդից չեն ոգտվել:

§ 23. Յեթև ավանսային մուծանք վճարող անձանց ցուցակն ոժկոմից ստանալուց 15 որվա ընթացքում Պետապի տեսչությունը չի ձևակերպում կամ մերժում կոլլեկտիվի ապահովագրությունը, ապա ապահովագրությունը կնքված և համարվում Պետապի հաշվին գումար փոխանցնելու որվանից և ըստ մուծանք վճարողներին տրվում են ապահովագրական վկալականներ:

§ 24. Կոլլեկտիվն ապահովագրական բարձրացրած գումարի անցնելու դեպքում Պետապի պատասխանատվությունը բարձրացված գումարի համար սկսվում և ոժկոմի կողմից Պետապի հաշվին բարձրացված ապահովագրական գումարից առաջին (ավանսային) մու-

ծանրը վճարելուց հետո և այն որվանից, մինչև վոր
որը վճարված և ապահովագրութունը նախորդ մու-
ծանքով: Ընդվորում, այդ մուծանքը պետք և Պետա-
պին վճարել վոչ պակաս քան ձեռնարկության, հիմ-
նարկի, կոլտնտեսության մեջ կամ ցեխում և այլն
աշխատողների առկա կադմի 40⁰/₁₀-ի համար:

Պետապի պատասխանատվությունն այն առանձին
անձանց համար, վորոնք բարձրացնում են իրենց
ապահովագրական գումարը մինչև կոլլեկտիվի կոդմից
ընդունված գումարը, սկսվում և բարձրացրած ապա-
հովադրական գումարից ոժկոմի դրամահավաքին առա-
ջին (ավանսային) մուծանքը վճարելուց հետո և այն
որվանից, մինչև վոր օրը վճարված և այդ անձանց
ապահովագրության համար նախկին մուծանքով:

§ 25. Յեթե ապահովագրվածը ժամանակին չի
վճարում իր հերթական մուծանքը, ապա Պետապի
պատասխանատվությունը վերջանում և այն որվա
ժամը 24-ից մինչև վոր օրը վճարված և վերջին ապա-
հովադրական մուծանքը:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐԻ ՀԱՍԱՐ

§ 26. Այն ապահովագրվածները, վորոնք անցել
են հաշմանդամության ծերության կամ հաշմության
պատճառով, կարող են կոլլեկտիվի ապահովագրու-
թյունից անկախ անընդհատ շարունակել իրենց ապա-
հովագրութունը այն գումարով, վորով նրանք ապահովա-
գրված են յեղել աշխատանքից հեռանալու պահին
մինչև ապահովագրական օտար վերջը յեղ դարձյալ
այնքան օտար, վորքան նրանք անընդհատ ապահովագրվել

են աշխատանքում յեղած ժամանակ: Այն ապահովա-
գրական տարին, յերբ ապահովագրվածն անցել և հաշ-
մանդամության պետք և ավելացնել աշխատանքի ժա-
մանակ ապահովագրվելու ժամանակաշրջանին: Իրենց
հերթական ապահովագրական մուծանքներն ապահովա-
գրված հաշմանդամները վճարում են այն կոլլեկտիվի
ոժկոմի միջոցով, վորտեղ նրանք ապահովագրված են
յեղել մինչև հաշմանդամության անցնելը կամ վարկա-
յին հիմնարկին՝ Պետապի տեսչության ցուցումով:

Այն ապահովագրվածները, վորոնք կոլլեկտիվում
թողնում են աշխատանքն այլ պատճառներով (վոչ
հաշմանդամության անցնելու կապակցությամբ) կա-
րող են, անկախ ապահովագրական ստաժից, անընդհատ
շարունակել իրենց ապահովագրությունը նախկին
աշխատավայրում մինչև ապահովագրական տարվա վերջը
և դարձյալ մեկ տարով:

§ 27. Այն ապահովագրվածները, վորոնք հիվան-
դության պատճառով արձակուրդում են գտնվում և
չեն վճարում իրենց հերթական ապահովագրական
մուծանքները, անկախ կոլլեկտիվի ապահովագրու-
թյունից, ապահովագրված են համարվում ամբողջ
արձակուրդի ժամանակաշրջանում, բայց վոչ ավելի
քան 4 ամսվա ընթացքում այն որվանից, յերբ նրանք
վճարել են իրենց վերջին ապահովագրական մու-
ծանքը: Արձակուրդից վերադառնալուց հետո ապահովա-
գրվածները պետք և մարեն իրենց ստաժիկա աշ-
խատավարձից բոլոր տարեկանված մուծանքները, բայց
վոչ ավելի ուշ, քան աշխատանքի վերադառնալու
որվանից մեկ ամսվա ընթացքում: Յերկարատե հի-
վանդության դեպքում հիշատակված 4 ամսյա ժամ-

կետը լրանալուց հետո, տարեկետված մուծանքներն ապահովագրվածը կամ նրա հանձնարարությունները վերականգնելու պետք է մարել նույնպես մեկ ամսից վերջում:

Այս արտոնությունը վայելում են միմիայն այն ապահովագրվածները, վերջինց ապահովագրությունը հիվանդության պատճառով արձակուրդի գնալու որոշույթի մեջ է յեղել (չի տարկետվել)

Հիվանդության ժամանակ հաշմանդամություն անցնելու դեպքում, ապահովագրվածն իր հաշմանդամություն անցնելու պահից մեկ ամսվա ընթացքում, պետք է մարել բոլոր տարեկետված մուծանքները և հետագայում ժամանակին վճարի հերթական ապահովագրական մուծանքները:

Յեթե հիշյալ ժամկետներում տարեկետված մուծանքները չեն մարվում ապահովագրությունը վերջանում է և ապահովագրվածը կորցնում է իր ապահովագրությունը շարունակելու իրավունքը՝ մինչև աշխատանքի վերադառնալը:

§ 28. Մեկ տարուց ավելի ժամանակով անընդհատ ապահովագրվելու դեպքում դժբախտ պատահարից աշխատունակություն կորցնելու համար սահմանվում է հավելում ապահովագրական գումարի վրա 20%-ի չափով, իսկ 2 տարուց ավելի ժամանակով անընդհատ ապահովագրվելու դեպքում՝ այն գումարի 50%-ի չափով, վորը նշված է այս կանոնների § 17-ում:

Ապահովագրության անընդհատությունը (ապա, հովագրական ստաժը) պետք է հաշվել այն պահից, յերբ տվյալ անձը նախապես մտել է կուլեկտիվ ապահովագրության մեջ և մինչև դժբախտ դեպքի որը

Յեթե ապահովագրության մեջ ընդհատումներ են տեղի ունենում, ապա ապահովագրական ստաժը պետք է հաշվել այն պահից, յերբ տվյալ անձը մտել է ապահովագրության մեջ վերջին ընդհատումից հետո և մինչև դժբախտ դեպքի որը:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

§ 29. Ապահովագրվածի մահանալու դեպքում ապահովագրական գումարը վճարվում է այն անձին, վորը ցույց է տրված ապահովագրվածի հայտարարության մեջ: Յեթե նման անձ ցույց չի տրված, ապա ապահովագրական գումարը վճարվում է ապահովագրվածի այն որինական ժառանգներին, վորոնք հիշատակված են քաղաքացիական որենսդրում:

Դժբախտ պատահարից մշտապես աշխատունակությունը կորցնելու դեպքում ապահովագրական գումարը վճարվում է ապահովագրվածին իրեն:

Իսկ յեթե ապահովագրական գումարն ապահովագրվածի կենդանության ժամանակ վճարված չի յեղել, ապա նրա մահանալուց հետո ապահովագրական գումար աշխատունակությունը կորցնելու համար չի վճարվում:

§ 30. Ապահովագրական գումար ստանալու համար Պետապի տեսչությունը պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթեր՝

ա) ապահովագրվածի ապահովագրական վկայականը:

բ) Զազա-ի վկայականն ապահովագրվածի մահվան մասին: Աշխատունակությունը կորցնելու դեպք

քում պետք է ներկայացնել դժբախտ դեպքի վերաբերյալ ակտի կամ արձանագրության պատճենը՝ կամ այլ փաստաթուղթ, վորը հաստատում է, վոր իրոք ապահովագրվածի հետ դժբախտ դեպք է պատահել:

Յեթն Զադս-ի վկայականում ցույց չի տված մահվան պատճառը, ապա պետք է ներկայացնել վկայական բժշկից ապահովահրվածի մահվան պատճառների մասին: Հերթական մուծանք չվճարելու դեպքում պետք է պաշտոնավայրից տեղեկանք ներկայացնել այն մասին, թե յերբ է ապահովագրվածն արձակուրդում յեղել հիվանդություն պատճառով:

Ապահովագրական գումարն ստանալիս ստացողը պետք է ներկայացնի իր անձնագիրը:

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բոլոր վերահիշյալ փաստաթղթերը Պետապի տեսչությունն ընդունում է ստորագրության և պահում է իր մոտ: Աշխատունակություն կորցնելու դեպքերի վերաբերմամբ ապահովագրական վկայականը վերադարձվում է ապահովագրվածին:

§ 31. Ապահովագրական այն գումարից, վորը վճարվում է մահվան կամ աշխատունակությունը վորցնելու համար պահվում է մինչ ապահովագրական տարվա վերջը հասանելիք ապահովագրական մուծանքները:

§ 32. Անկախ կորած աշխատունակության համար ապահովագրական գումարը վճարելուց, լրիվ ապահովագրական գումարը վճարվում է, յեթե ապահովագրվածը մահանում է ապահովագրություն ուժի մեջ յեղած ժամանակ:

§ 33. Դիմում ապահովագրական գումար ստա-

նալու համար պետք է տալ Պետապի տեսչության ըստ ապահովագրվածի պաշտոնավայրի կամ ըստ ապահովագրական գումար ստացողի բնակավայրի վոչ ուրան ապահովագրվածի մահանալուց կամ նրա հետ դժբախտ դեպք պատահելուց 2 տարվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո տրված պահանջները չեն բավարարվում:

§ 34. Բողոքներ Պետապի շրջանային և քաղաքային տեսչությունների սխալ գործողությունների դեմ տրվում են Պետապի տեղական հանրապետական լիկրային և մարզային վարչություններին, իսկ նրանց վճիռներին համաձայն չլինելու դեպքում՝ միութենական հանրապետությունների Պետապի վարչությանը: Միութենական հանրապետությունների Պետապի վարչությունների վճիռներին կարելի չէ բողոքաբերել ԽՍՀՄ Պետապի Գլխավոր վարչությանը Մոսկվայում:

ՊԵՏԱՊԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. Վլասով



04

ՀՀ Ազգային գրադարան



NL0218911

43. 775

04

ПРАВИЛА
Добровольного коллективного
страхования жизни
трудящихся